Քաղվածք

Արեւմտեան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) նախագահութեան թիվ 17, 25.07.2014 թվականի նիստի արձանագրությունից

Նիստին մասնակցեցին Արեւմտեան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) Նախագահութեան 11 անդամներ: Հրավիրված էին Արեւմտեան Հայաստանի նախագահ Արմենակ Աբրահամեանը, Արեւմտեան Հայաստանի Վտարանդի Կառավարութեան վարչապետ Տիգրան Փաշաբեզեանը եւ Արեւմտեան Հայաստանի Ներքին գործերի նախարար Մարտիրոս Շահբազեանը:

4-րդ կետ. ԱՀԱԺ-ի նախագահութեան նիստի քննարկմանը ներկայացված ԱՀՀ Սահմանադրութեան նախագծի վերաբերյալ

ԱՀԱԺ-ի Նախագահությունը եւ նրա աշխատանքային խմբերը քննութեան առնելով սույն օրենքի նախագիծը՝ այն ներկայացրին ԱՀԱԺ Մշտական հանձնաժողովներին քննարկման համար:

Սույն նախագիծը ԱՀԱԺ-ի նախագահի էլեկտրոնային հասցեին ուղարկել է ԱՀՎ Կառավարության Արդարադատութեան նախկին նախարար Հրայր / Սուրիկ Ղազարեանը, որպես ԱՀՀ Սահմանադրութեան նախագծի օրինակ:

ԱՀԱԺ-ի նախագահությունը ԱՀՀ Սահմանադրութեան նախագծի վերաբերյալ նշում է, որ սույն փաստաթուղթը ձեւակերպված է մեկ այլ պետական կառավարման համակարգի տրամաբանությամբ, ինչը չի համապատասխանում ԱՀՀ պետական կառավարման համակարգի իրավական-քաղաքական տրամաբանութեանը, որովհետեւ ԱՀՀ պետական կառավարման համակարգը նախագա-խորհրդարանական է:

Ներկայացված ԱՀՀ Սահմանադրութեան նախագիծը ոչ մի կերպ համապատասխանում ԱՀՀ պետական կառուցվածքի իրավական-քաղաքական տրամաբանությունը, ինչը դեռեւս 2004 թվականից ընդունված եւ 2014-ին ամբողջացած է «Արեւմտեան Հայաստանի պետական կառուցվածքի, Արեւմտեան Հայաստանի Ազգային ժողովի պատգամավորների կարգավիճակի եւ Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի կանոնակարգի մասին» Արեւմտեան Հայաստանի Օրենքի հիման վրա (07.03.2014), ըստ որի՝ ԱՀՀ պետական համակարգը նախագահա-խորհրդարանական համակարգ է:

Ավելացնենք, որ ԱՀՀ Սահմանադրության նախագիծը մշակելու է հատուկ ձեւավորվող Սահմանադրության նախագծի մշակման հանձնաժողովը, որը հաշվի է առնելու

միջազգային ընտանիքի կողմից 1920-ին ընդունված որոշումները, դաշնագրերը, պայմանագրերը, ինչպես նաեւ 2004-ից հրապարակված հռչակագրերը, որոշումները, հրամանագրերը՝ Արեւմտյան Հայաստանի հայերի իրավունքների վերաբերյալ:

ԱՀԱԺ-ի նախագահությունը շնորհակալություն հայտնելով պարոն Ղազարեանին, հայտնում է, որ սույն Սահմանադրութեան նախագիծ օրինակը չի կարող վերցվել, որպես հիմք կամ օրինակ ԱՀՀ-ի համար:

Նկատի առնելով վերոհիշյալ փաստերը, Արեւմտեան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) նախագահությունը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Ներկայացված ԱՀՀ Սահմանադրութեան նախագծի սույն օրինակը ոչ մի կերպ չի համապատասխանում ԱՀՀ պետական կառուցվածքի իրավական-քաղաքական տրամաբանությունը եւ չի կարող վերցվել, որպես հիմք կամ օրինակ ԱՀՀ-ի համար:

Արեւմտեան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) Նախագահ՝
Արմեն Տեր-Սարգսեան

Արեւմտեան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) Քարտուղար՝
Սաթենիկ Ալեքսանեան

25.07.2014 թ.

Արեւմտեան Հայաստանի Ազգային ժողով
Խորհրդարան